ունենալով Ցորելենական կենդրոնական Ցանձնաժողովի անդամների սակաւութիւնը, նշանակում ենք Տ. Տ. Մուշէ, Ներսէս և Գէորգ վարդապետներին և Վրթանէս աբեղային և Ցանձնաժողովի անդամներ և պատուիրում ենք պարբերաբար ժողովներ գումարել՝ Ցորելենական տօնի հետ կապ ունեցող խնդիրների և ծրագրի մասին խորհրդակցելու և արդիւնքը զեկուցանելու մեզ ի տեղեկութիւն»։ 29 յուլիսի, թ. 1096։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ռուսաստանի թեմական Առաջնորդներին ներկայացնել նորին Սրբութեան իրենց շրջաբերական գրութիւններից մի-մի օրինակ ուղղած դպրոցական վարչութիւններին՝ ուսուցիչների համար նահանգապետներից հաճութիւն ստանալու մասին։ 29 յուլիսի, թ. թ. 1100—1104։

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ուղարկել ձրիաբար Կ. Պոլսի Գալֆայեան Ազգային որբանոցին «Արարատ» և ընթերցանութեան գրքեր։ 29 յուլիսի, թ. 1105։

Վեհափառ Հայրապետի հրամանով յանձնարարուեց Ռուսաստանի թեմական Առաջնորդներին, որ իրենց թեմի եկեղեցիներում դանձանակ շրջեցնեն Ռուսական Կարմիր-Խաչի հովանաւորութեան ներքոյ գտնուած բորոտների օգտին և ժողովուած դանձանակն ուղարկեն ս. Էջմիածնի Սինօդին՝ ըստ պատկանելոյն հասցնելու համար։ 30 յուլիսի, թ. 1106—1110։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆ.

Կոնդակ Բերայի Խորէն աւագ քահանայ Ցարութիւնեանցի անունով, որով նրան, համաձայն Կ. Պոլսի Հայոց Ազգային կենդրոնական վարչութեան կրօնական ժողովի միջնորդութեան, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 18 յունիսի, թ. 922։

Կոնդակ Տարտանէլի Դիոնէսիոս աւագ քահանայ Տրէզեանի անունով, որով նրան համաձայն նոյն կրօնական ժողովի միջնորդութեան, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 18 յունիսի, թ. 923։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

1 մայիսի, թ. 198. Սինօդը՝ լսելով Տփխիսի քաղաքագլխի այս տարուայ մարտի 18-ի, № 914 գրութիւնը՝ Մեծ-Իշխանուհի Օլգա Թէոդորովնային Տփխիսում արձան կանգնեցնելու համար նուիրատուութիւններ ժողովելու մասին, որոշեց ուղարկել Տփխիսի քաղաքային վարչութեան Մայր Աթոռի միջոցներից յիսուն ռուբլի։

1 մայիսի, թ. 195. Սինօդս՝ լսելով Ներսիսեան դպրոցում տեղի ունեցած դրամական զեղծումների վերաբերեալ գործի զեկուցումը և ի նկատի ունենալով, որ յանցաւոր դանձապահը արդէն յանձնուած է մարմնաւոր իշխանութեան դատին, իսկ կառավարիչ Գասպարեանը հրաժարեցուած է, որոշեց կարճել Սինօդումս այս գործը։

1 մայիսի, թ. 197. Սինօդը՝ լսելով նախկին դատախազ Լ. Ֆրէնկէլից Վաղարշապատի վանքապատկան տան 555 ռուբ. 16 կոպ. ապառիկ վարձագրամի պահանջման վերաբերեալ գործը և ի նկատի ունենալով, որ հակառակ Սինօդի բոլոր ջանքերի երևան չեկաւ Ֆրէնկէլի բնակութեան տեղը, որի պատճառով հնարաւորութիւն չկայ պահանջելու նրանից դատարանի միջոցով նրա պարտքը, որոշեց կարճել այս գործը։

3 մայիսի, թ. 204. Սինօդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի անցած տարուայ օգոստոսի 28-ի, № 3979 յայտարարութիւնը՝ Բորչալուի գաւառի Կուրդան գիւղի բնակիչ Սարգիս Տէր-Յարութիւնեանցին նոյն գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց, թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել Սարգիս Տէր Յարութիւնեանին